Գլխավոր
Մարզպետարան
Նորություններ
Տեղեկատվական կենտրոն
Առցանց հեռարձակումներ
Հայաստանի Հանրապետության տարածքների համաչափ զարգացում
Համայնքներ
Ծրագրեր և գերակա խնդիրներ
Ընդհանուր տեղեկություններ
Արտաքին կապեր
Իրավական ակտեր
Կազմակերպություններ
Քաղաքացիների ընդունելություն
Հայտարարություններ
Տեղեկատվության ազատություն, դիմեք մեզ
Քննարկումներ
Հղումներ
Մեթոդական ուղեցույց
Կայքի քարտեզ
Հողերի կառավարում, գյուղատնտեսություն
ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների կողմից աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին
Թեժ գիծ
Ազդարարի մասին
Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ
Համապետական շաբաթօրյակ
Տեղեկատվություն՝ սպանդանոցների ստեղծման և դրանց գործունեության վերաբերյալ
Ինչպես առցանց դիմել համայնքապետարան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷԼ. ՓՈՍՏ

39024991@e-citizen.am

(միայն www.e-citizen.am համակարգով ծանուցումների համար)

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունեց ֆրանսիական «Միշել-Ալե-Էգայան» պարային համույթի ղեկավարներին

04.11.2022

Գեղարքունիք-Իզեր ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում նոյեմբեր 4-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունեց ֆրանսիական «Միշել-Ալե-Էգայան» պարային համույթի հիմնադիր Միշել-Ալե-Էգայանին, նույն համույթի տնօրեն Բրունո Միաշոնին և Ֆրանս-Ֆորմասիոն Ինտերնասիոնալ կազմակերպության տնօրեն Լիլյա Շալունցին: Վերջիններս մարզպետին ներկայացրին Հայաստանում և մասնավորապես Գավառ և Սևան համայնքների արվեստի դպրոցների հետ ունեցած համագործակցության և իրականացվող ծրագրերի մասին: Ինչպես նշվեց, Գեղարքունիք-Իզեր ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Իզերի դեպարտամենտի աջակցությամբ արդեն 5-րդ տարին է, ինչ ֆրանսիական «Միշել-Ալե Էգայան» պարային համույթի մասնագետները պարային ատելյեներ են անցկացնում Գավառի արվեստի դպրոցի պարի խմբի սաների և ֆրանսերեն լեզվի ուսուցման դասընթացների մասնակից ուսանողների շրջանում:
«Մենք աշխատում ենք մանկավարժական աշխատանքը զուգակցել արտիստիկ-դերասանական աշխատանքի հետ: Այդ գաղափարը կյանքի ենք կոչում ֆրանսիայի մշակութային կյանքում և փորձում ենք այն տեղափոխել նաև Հայաստան՝ Գեղարքունիքի մարզ: Արդեն 12 օր է՝ Հայաստանում ենք և աշխատում ենք Գավառի արվեստի դպրոցի սաների մասնակցությամբ բեմականացնել պարային ներկայացումներ, որոնք, համոզված եմ, առաջիկայում կներկայացնենք հանդիսատեսին: Ունենք բազմաթիվ նոր գաղափարներ և ծրագրեր, և կցանկանանք դրանց վերաբերյալ քննարկում կազմակերպել մարզպետարանի և մեզ հետ համագործակցող մշակութային հաստատությունների ղեկավարների հետ: Մենք ցանկանում ենք նաև համագործակցություն ստեղծել Գեղարքունիքի մարզի և մայրաքաղաքի մեր գործընկերների միջև՝ Գեղարքունիքի մարզի դասավանդողների վերապատրաստումներ իրականացնելու նպատակով: Մեզ համար շատ կարևոր է, որ մեր աշխատանքը արժանանում է Ձեր ուշադրությանը, և ակնկալում ենք Ձեր աջակցությունը՝ մեր համագործակցության ընդլայնման հարցում»- նշեցին պարային համույթի ղեկավարները:
Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը ողջունեց հյուրերին՝ կրկին մարզ այցելելու և տարբեր համայնքների հետ մշակութային համագործակցություն ծավալելու համար, նշելով, որ պատրաստ է ֆրանսիական կողմի հետ քննարկել նաև առաջիկա տարիներին մարզի համար նախատեսվող նոր գաղափարներն ու ծրագրերը:
«Պատրաստակամ ենք մշակութային ծրագրերի առումով ևս ընդլայնել մեր համագործակցությունը և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել համապատասխան աջակցություն: Գեղարքունիքի մարզում արդեն տևական ժամանակ է, ինչ նման ծրագրեր է իրականացվում «Միշել-Ալե Էգայան» պարային համույթի մասնագետների կողմից և ուրախ եմ, որ մարզի պարուսույցները ևս հնարավորություն կունենան վերապատրաստվելու և նոր փորձ ու գիտելիք փոխանցելու մեր սերունդներին»,- նշեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

← Վերադառնալ ցուցակին

0

ԴԻՄԵՔ ՄԵԶ

Դուք հնարավորություն ունեք առցանց ռեժիմում ուղարկել Ձեր դիմումներն, առաջարկություններն ու նամակները

ՀԵՏԵՎԵՔ ՁԵՐ ՆԱՄԱԿԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Մարզպետարան ուղղված Ձեր պաշտոնական դիմումը այլևս թափանցիկ ընթացակարգ ունի: Մեր կայքի շնորհիվ Դուք կարող եք տեղեկանալ, թե պետական որ մարմնին կամ պաշտոնյային է Ձեր առձեռն հանձնած կամ փոստով ուղարկած դիմումը վերահասցեագրվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

էլ. փոստ →

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Կայքը ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ: Այստեղ արտահայտված տեսակետները ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանինն են և պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

© 2011-2022, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Հայաստանի Հանրապետություն, Երեւան 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3
mta@mta.gov.am